

«Հաստատում եմ»
Հայաստանի Հանրապետության
Տարածքային Կառավարման
համակարգող նախարար

_____ Հ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

_____ 2006թ.

Տպագրված է __օրինակ

օրինակ ____

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Պետական ռեգիստրում

Գրանցման թիվը _____

Գրանցման օրը « ____ » _____ 2006թ.

Վկայական _____

Լեռնային Ղարաբաղի Պետական ռեգիստր

_____ Ա, Օ, Բախշյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԵՅՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՐԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության կառավարության 8 մայիսի 2003թ. « Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին » N 534-Ն որոշմամբ հիմնադրված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունը հանդիսանում է Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության « Լեռնային Ղարաբաղի բաժանմունք » պետական հիմնարկի (Գրանցման ծածկագիր 80018250, վկայական N 0028, 20.04.1997թ.) իրավահաջորդը:

3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, « Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին », « Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

4. Կազմակերպության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

5. Կազմակերպության անվանումն է
հայերեն լրիվ՝ « Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
հայերեն կրճատ՝ « ՍՊԱԾ » ՊՈԱԿ
ռուսերեն լրիվ՝ « Восточная служба сейсмической защиты » государственная некоммерческая организация,
ռուսերեն կրճատ՝ « ВССЗ » ГНКО
անգլերեն լրիվ՝ «Eastern Survey for Seismic Protection » state non commercial organization»
անգլերեն կրճատ՝ « ESSP » SNCO:

6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք, Ստեփանակերտ, Ա, Առաքելյանի փ,

7. Կազմակերպությունը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից:

8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացելու Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության արժույթով այնպես էլ արտարժույթով:

9. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և այլ անհատականացման միջոցներ:

10. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:

11. Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

12. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ կազմակերպության պարտավորությունների համար, բացառությամբ մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների:

13. Կազմակերպությունը կարող է այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

14. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման աշխատանքների կատարումը.

բ) սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների իրականացումը.

գ) սեյսմիկ վտանգի մոնիտորինգի իրականացումը.

դ) սեյսմիկ վտանգի հետ կապված այլ երկրորդային վտանգների մոնիտորինգը և գնահատումը.

ե) գրունտի ուժեղ շարժումների մոնիտորինգի կատարումը.

զ) հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների խոցելիության գնահատումը, ուժեղ երկրաշարժերի դեպքում դրանց վարքի կանխատեսումը, երկրաշարժերի հետևանքների վերլուծությունը.

է) սեյսմիկ պաշտպանության ոլորտում բնակչության իրազեկության և պատրաստվածության բարձրացումը:

15. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում հետևյալ ուղղություններով.

ա) սեյսմիկ միկրոշրջանացման աշխատանքների կատարում

բ) հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության և տեխնիկական վիճակի գնահատում.

գ) շինարարական կոնստրուկցիաների, նյութերի ու մոդելների լաբորատոր փորձարկումներ՝ շենքերի և շինությունների սեյսմակայունության ապահովման նպատակով.

դ) նորագույն տեխնոլոգիաներով շենքերի սեյսմակայունության բարձրացման նախագծերի մշակում.

ե) տիպային բնակելի շենքերի մոնիտորինգի իրականացում՝ սեյսմաչափիչ կայանների կիրառմամբ.

զ) երկրաբանահետազոտական գործունեություն՝ սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման նպատակով.

է) բնակչության տարբեր շերտերի սեյսմիկ պաշտպանության հիմնադրույթների անմիջական ուսուցում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ՆՐԱՆ ԱՍՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

17. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

18. Հիմնադիրը սեփականության իրավունքով՝ կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

19. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

20. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

21. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

22. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

23. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

24. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին (պետության կարիքների համար, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

25. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառնություն իրականացնող մարմնի կողմից:

26. Կազմակերպության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը:

27. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

28. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, հիմնադրի լիազորված պետական մարմինը և գործադիր տնօրենը:

29. Կազմակերպության գիտատեխնիկական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ գիտատեխնիկական խորհուրդ:

Գիտատեխնիկական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում՝

ա) կազմակերպության կանոնադրության վերաբերյալ.

բ) կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների համալիր ծրագրերի, առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ.

գ) այլանների և ծրագրերի վերաբերյալ՝ ելնելով կազմակերպության հիմնական խնդիրներից, նպատակներից.

դ) առաջավոր փորձի տարածման վերաբերյալ.

ե) աշխատողների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ.

Գիտատեխնիկական խորհրդի կազմում ընդգրկվում են կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և առաջատար մասնագետները:

Գիտատեխնիկական խորհրդի նիստը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ: Գիտատեխնիկական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Գիտատեխնիկական խորհրդի նիստերին կարող են հրավիրվել այլ ստորաբաժանումների մասնագետներ:

Գիտատեխնիկական խորհրդի նիստերը նախագահում է կազմակերպության տնօրենը:

30. Հիմնադրի լիազորություններն են՝

ա) կազմակերպության հիմնադրումը

բ) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) կազմակերպության վերակազմավորումը և լուծարումը.

31. Հիմնադրի կողմից լիազորված մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

32. Լիազորված մարմինը՝

ա) հաստատում է կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

բ) հաստատում է պետական կազմակերպության կանոնադրությունը և դրանում փոփոխություններ կատարում.

գ) սահմանում է պետական կազմակերպության կառավարման համակարգը.

դ) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը.

ե) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

զ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

է) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

ը) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

թ) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե պետական կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին.

ժ) հաստատում է պետական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

ի) իրականացնում է օրենքով, հիմադրի որոշմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

33. Կազմակերպության գործադիր մարմինը գործադիր տնօրենն է, որը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը:

34. Գործադիր տնօրենի գործառույթներն իրականացնող անձնի հետ կնքվում է պայմանագիր, որը «ՍՊԱԾ»-ի պետի ներկայացմամբ հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:

36. Կազմակերպության գործադիր տնօրենը՝

ա) առանց լիազորագրի գործում է կազմակերպության անունից, ներկայացնում՝ նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

բ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

գ) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները:

դ) տնօրինում է կազմակերպության գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները:

ե) կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային):

զ) կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև:

է) սահմանում է աշխատողների աշխատանքի վարձրատրության չափերը:

ը) բացում է բանկային հաշիվներ:

թ) հաստատում է կազմակերպության հիմարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, նշանակում դրանց ղեկավարներին:

ժ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

37. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

38. Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: